**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** **ՎԻՎ/66/2024**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «15» ապրիլի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից «Հետք» լրատվամիջոցի՝ «Դիանա Գասպարյանի սկեսուրն Էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել» վերտառությամբ[1] հրապարակման մեջ ներկայացված տեղեկատվությամբ վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման հիմք հանդիսացած նյութերը, պարզել է.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը 2023 թվականի սեպտեմբերի 5-ին ընդունել է «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» և «Անշարժ գույքը բաժանելու և բաժանված գույքային միավորները հասցեավորելու մասին» թիվ 1614-Ա և 1615-Ա որոշումները՝ իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանին պատկանող «Նարե պլյուս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վ. Տերյան փողոց 64/5 հողամաս հասցեի մոտ 1.2 հա մակերեսով անշարժ գույքի վերաբերյալ, ինչի արդյունքում հողամասի մի մասի գործառնական նշանակությունը հասարակականից փոխվել է բնակելի կառուցապատման նշանակության:

[1] https://hetq.am/hy/article/162586

Դիանա Մնացականի Գասպարյանի 2023 թվականի նոյեմբերի 24-ի և նոյեմբերի 28-ի որոշումներով իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանին պատկանող «Նարե պլյուս» ՍՊԸ-ին տրվել է 20 շինարարության թույլտվություն՝ բնակելի տներ կառուցելու համար:

Վերոնշյալ որոշումների և շինարարության թույլտվությունների ընդունմամբ Դիանա Մնացականի Գասպարյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության» մասին օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝** **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

**ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**